ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳԶՀ-ՄԱԱՇՁԲ-18/1

ք. Երևան «21» փետրվարի, 2018 թ.

«Զանգակ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս գլխավոր տնօրեն Սոկրատ Մկրտչյանի, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը» (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս գործադիր տնօրեն Գեղամ Գևորգյանի՝ մյուս կողմից (Կատարողը և Պատվիրատուն միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է կատարել սույն պայմանագրի 1.2 կետում նշված աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքների արդյունքը և վճարել դրանց դիմաց:
1.2. Կատարողը պարտավորվում է կատարել հավաստագրերի տպագրական աշխատանքներ:
1.2.2. Աշխատանքների տեխնիկական տվյալները՝

Անվանումը՝	«Հավաստագիր»
Տպաքանակը՝	2400 օրինակ
Էջերի քանակը	1
Չափսը՝	297x210 մմ
Թուղթը՝	250 գր/մ² կավճապատ
Տպագրությունը՝	գունավոր:

1.3.Աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է մինչև 2018 թվականի փետրվարի 28-ը:
1.3.1. Աշխատանքները պատշաճ կատարված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման-ընդունման ակտի կամ հաշվի ստորագրման պահից:

2. Կողմերի պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝
2.1.1. Աշխատանքները կատարել պատշաճ որակով.
2.1.2. Աշխատանքները կատարել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում.
2.1.3. Անձամբ կատարել Աշխատանքները:
2.2. Պատվիրատուն պարտավոր է Աշխատանքների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գինը:
2.3. Պատվիրատուն հավաստում է, որ ունի սույն պայմանագրով նախատեսված պայմաններով Կատարողին պատվեր տալու համար պահանջվող բոլոր իրավունքները և սույն պայմանագրի կատարումով չեն խախտվում որևէ երրորդ կողմի հեղինակային և/կամ այլ իրավունքներ, տրամադրված նյութերը չեն խախտում ՀՀ օրենսդրությունը:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է 70 000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:
3.2. Սույն պայմանագրի գնի հարյուր տոկոսը պատվիրատուն վճարում է Աշխատանքների արդյունքը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
3.3. Պայմանագրային գինը Պատվիրատուի կողմից Կատարողին վճարվում է Կատարողի՝ սույն պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի 1.3 կետում նշված Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու համար Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.1 տոկոսի չափով: Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետների խախտման դեպքում Կատարողն իրավունք ունի համամասնորեն ուշացնել Աշխատանքների կատարումը, ինչի չի համարվում կետանց:
4.2. Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետների խախտման դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջելու վճարել տուգանք՝ վճարման ենթակա գումարի 0.1 տոկոսի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար: Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետների ավելի քան 10 օրով խախտման դեպքում Կատարողն իրավունք ունի միակողմանի հրաժարվել պայմանագրից և պահանջել վճարում փաստացի կատարված աշխատանքների դիմաց, ինչպես նաև վնասների, ներառյալ՝ բաց թողնված օգուտի հատուցում:
4.2. Պատվիրատուն պարտավորվում է զերծ պահել Կատարողին տպագրության համար տրամադրվող նյութերի հետ կապված երրորդ անձանց հնարավոր պահանջներից: Պատվիրատուն լիակատար նյութական պատասխանատվություն է կրում Կատարողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումով կամ տպագրության համար տրամադրված նյութերով ցանկացած երրորդ կողմի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ այլ օրենքներով նախատեսված իրավունքների կամ ՀՀ օրենսդրության խախտում տեղի ունենալու դեպքում խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ Կատարողի կատարած ծախսերի, առաջացած վնասների փոխհատուցման և Կատարողի բարի համբավին ու գործարար հեղինակությանը հասցված վնասի փոխհատուցման համար:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն

իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրն իրավական ուժ է ստանում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչ Կողմերի կողմից սույն պայմանագրի շրջանակներում իրենց բոլոր պարտավորությունների պատշաճ կատարումը:

7.2. Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Պայմանագրի մեկ օրինակ մնում է Կատարողի և մեկ օրինակ՝ Պատվիրատուի մոտ:

7.3. Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից և հաստատված են Կողմերի կնիքներով:

7.4. Սույն պայմանագրի փոփոխություններն ու լրացումները, սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերը կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա բաղկացուցիչ մասը:

7.5. Սույն պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են Կողմերի անմիջական բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող՝	Պատվիրատու՝
«Զանգակ-97» ՍՊԸ	Գյուղատնտեսության զարգացման
Հասցե՝ ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2	հիմնադրամ
ՀՎՀՀ՝ 00830786	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3
Բանկ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	ՀՎՀՀ՝ 02659417
Հ/հ՝ 217-001-040013-001	Բանկ՝ «Ամերիաբանկ Գրիկոլ Բանկ» ՓԲԸ
	Հ/հ՝ 22000920251000
Ս. Մկրտչյան	Գ. Գևորգյան